

ԾՕԶԷՖ ՍՄԻԹԷ ՄԱՐԳԱՐԷԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցոյ



**Հրատարակութիւն՝ Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցւոյ
Սուրբ Աւք Սիրի, Նուբան**

Copyright © 1982 Corporation of the President of
The Church of Jesus Christ of Latter-day Saints
Joseph Smith's Testimony
Translated into Armenian
All Rights Reserved
Printed in the United States of America

ՃՕՋԷՖ ՍՄԻԹՆ ՄԱՐԳԱՐԷԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ պատմութիւնը քաղուած է Ճօզէֆ Սմիթի կողմէ կազմուած ընդարձակ եւ մանրամասն պատմութենէն, որ կը պատմէ՝ իր իսկ բառերով, կարեւոր եղելութիւններէն մի քանիսն, որոնք պատճառ եղան Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցւոյ հիմնումին:

Ծնած եմ, Տիրոջ թուականով, 23 Դեկտ. 1805-ին, Միացեալ Նահանգներու, Վերմօնթ նահանգին, Վինտսօր կուսակալութեան, Շարօն քաղաքին մէջ: Երբ մօտաւորապէս տասը տարեկան էի, հայրս, երէց Ճօզէֆ Սմիթս, ձգելով Վերմօնթ նահանգը ուղղուեցաւ դէպի Օնթարիօ (ներկայիս՝ Վէյն) կուսակալութեան, Բալմիրա քաղաքը — Նիւ Եօրք նահանգին մէջ: Հայրս Բալմիրա հասնելէն չորս տարի ետք էր, որ ան ընտանեօք տեղափոխուեցաւ նոյն կուսակալութեան Մանչէսթրը քաղաքը:

Մեր Մանչէսթրը փոխադրութենէն ետք՝ երկրորդ տարուան ընթացքին, մեր բնակած վայրը, անսովոր իրարանցում մը կար կրօնական խնդիրներու շուրջ: Այդ սկսաւ Մեթոտականներէն, սակայն շուտով տարածուեցաւ այդ շրջանի բոլոր ազանդներուն մէջ: Արդարեւ, վերոյիշեալ քաղաքին բոլոր շրջանակները ազդուած էին այս շարժումէն եւ ժողովուրդը մեծ խումբերով կը միանար այս կամ այն խմբակցութեան: Այս վիճակը ստեղծեց խառնաշփոթութիւն ու բաժանում: Ոմանք կը պոռային — «Մեզի միացէք», ուրիշներ՝ «Ոչ՝ մեզի»: Ոմանք կը ջատագովէին Մեթոտական հաւատքը, ուրիշներ՝ Երիցական, ու տակաւին ուրիշներ՝ Մկրտչական:

Այս շրջանին, դարձի եկողները մեծ հաւատք կը ցուցարեւէին իրենց հաւատացած ազանդին հանդէպ. նոյնպէս՝ քարոզիչները մեծ

աշխուժութեամբ կը ջանային դարձի բերել ժողովուրդը, առանց յարանուանական խտրութեան: Բայց երբ դարձի եկողները սկսան խմբուիլ այս ու այն հատուածներու շուրջ, ի յայտ եկաւ որ քարոզիչներուն ու դարձի եկողներուն մեծ սիրոյ զգացումները աւելի երեւութական էին քան իրական: Այս պատճառաւ մեծ խառնաշփոթութեան եւ զիրար ատելու շրջան մը սկսաւ, ուր մէկ եկեղեցականը միւս եկեղեցականին, մէկ հաւատացեալը միւս հաւատացեալին դէմ կ'ելլէր: Որեւէ բարի զգացում որ կար՝ կորսուեցաւ այս գաղափարներու ահռելի մրցակցութեան ընթացքին:

Այս ատեն, ես 15 տարեկան էի: Իմ հօրս ընտանիքը Երիցական հաւատքին նորադարձ եղած էր, եւ անոր շորսը (մայրս՝ Լուսի, եղբայրներս՝ Հայրըմ եւ Սամուէլ Հէրրիսըն ու քոյրս՝ Սօֆրօնիա) այդ եկեղեցւոյ միացան:

Այս խառնաշփոթութեան ընթացքին միտքս խորունկ մտածումներու եւ վրդովանքի մէջ էր: Թէեւ զգացումներս խորունկ ու յաճախ սուր էին, ինքզինքս մեկուսացած պահեցի այդ կրօնական հատուածներէն — հակառակ անոր որ ներկայ կը գտնուէի անոնց զանազան ժողովներուն ժամանակիս ներած չափով: Ժամանակի ընթացքին միտքս մասնակիօրէն հակեցաւ Մեթոտականներուն ու նոյնիսկ փափաքը ունեցայ անոնց միանալու: Սակայն այնքան մեծ էր խառնաշփոթութիւնը իրենց ստորաբաժանումներուն միջեւ որ անկարելի էր, ինծի պէս երիտասարդի մը համար, որ մարդոց ու նիւթերու հանդէպ փորձառութենէ զուրկ էր, եզրակացութեան մը գալ թէ որն էր ճիշդը եւ որն էր սխալը:

Յաճախ մտային մեծ յուզումներ կ'ունենայի. ժխտրն ու վրդովանքը ահաւոր ու շարունակական էին:

Բառերու եւ գաղափարներու խռովքին մէջ ինքզինքիս հարց կուտայի: Ի՞նչ պէտք է ընել: Այս բոլոր աղանդներէն ո՞ր մէկը ճիշդ է. կամ արդեօք բոլորն ան միասնաբար սխալ են: Եթէ

անոնցմէ որեւէ մէկը ճիշդ է, ո՞րն է այդ, եւ ի՞նչպէս պիտի գիտնամ զայն:

Մինչ ես կը ջանայի ձերբազատուիլ կրօնական հատուածներու մրցակցութեան պատճառած դժուարութիւններէն, օր մը, պատահամբ կը կարգայի Ընդհանրական Թուղթ Յակօրոսի, Ա. գլուխ 5րդ համարը որ կ'ըսէ. — «Եթէ ձեզմէ ոեւէ մէկը իմաստութեան պակասը զգայ, թող խնդրէ զայն Աստուծմէ որ ամէնուն առատօրէն կուտայ ու չի նախատեր, — եւ այսպէս անոր պիտի տրուի»:

Սուրբ Գրութիւններուն մէջէն որեւէ հատուած այնքան զօրութեամբ չէ խօսած մարդու սրտին, որքան խօսեցաւ այս հատուածը իմ սրտիս: Ինծի թուեցաւ թէ ան մեծ զօրութեամբ կը մտնէր իմ սրտիս իւրաքանչիւր զգացումին: Կրկին ու կրկին անդրադարձայ այս հատուածին վրայ, գիտնալով որ եթէ մէկը կար որ Աստուծոյ իմաստութեանը կը կարօտէր — ան ես էի: Որովհետեւ չէի գիտեր ինչպէս գործել. եւ եթէ աւելի իմաստութիւն շտանայի, երբե՛ք պիտի չկարողանայի գիտնալ — քանզի զանազան աղանդներու կղերականները նոյն հատուածը այնքան տարբեր կերպով կը բացատրէին որ Ս. Գիրքին դիմելով խնդիրը լուծելը անհնարին կը դառնար:

Առաջին Տեսիլքը

Վերջապէս այն եզրակացութեան եկայ, որ կամ խաւարի եւ անորոշութեան մէջ պէտք է մնամ, եւ կամ՝ պէտք է ընեմ այն ինչ որ Յակօրոս կը թելադրէ. այսինքն Աստուծմէ խնդրել: «Աստուծմէ խնդրելու» որոշումին յանգեցայ, եզրակացնելով որ եթէ Ան իմաստութիւն կուտայ, ազատականօրէն եւ ոչ թէ մեղադրանքով, անոնց որոնք իմաստութենէ զուրկ են — ուրեմն ես ալ կրնայի համարձակիլ Աստուծմէ խնդրել:

Ուստի համաձայն որոշումիս պուրակի մը մէջ առանձնացայ, որպէսզի Աստուծմէ խնդրել փորձեմ: 1820-ի վաղ գարնան, գեղածիծաղ ու

պայծառ առաւօտ մըն էր: Կեանքիս մէջ առաջին անգամն էր որ այս տեսակ բան մը կը փորձէի. քանզի բոլոր իմ անձկութիւններուս մէջ երբեւիցէ փորձած չէի բարձրաձայն աղօթել:

Երբ հասայ կանխաւ որոշած վայրս, շուրջս նայեցայ ու ինքզինքս առանձին գտնելով, ծնրադրեցի ու սկսայ իմ սրտիս իղձերը մատուցանել Աստուծոյ: Հագիւ թէ սկսած էի, երբ զիս կաշկանդող զօրութենէ մը յաղթահարուեցայ, եւ այնպէս ապշեցուցիչ էր անոր իմ վրաս ունեցած ազդեցութիւնը, որ լեզուս կապուեցաւ եւ այլեւս չկրցայ խօսիլ: Չորս կողմս թանձր խաւար մը պատեց ու վայրկեան մը այնպէս թուեցաւ ինծի, թէ յանկարծական կործանման դատապարտուած էի:

Սակայն բոլոր ուժերս հաւաքելով, Աստուծոյ օգնութեան կանչեցի որպէսզի ազատէ զիս կաշկանդող այս աներեւոյթ թշնամիէն: Այն վայրկեանին երբ պատրաստ էի ընկղմելու յուսալքութեան ու կործանման մէջ — ոչ թէ երեւակայական կործանում, այլ՝ աներեւոյթ աշխարհի էակի մը ուժին տակ, որուն հրաշալի ուժին նման որեւէ անձի մը մէջ երբէք զգացած չէի — ճիշդ այդ ահագանգի վայրկեանին՝ տեսայ լոյսի սիւն մը գլխուս վերեւ, աւելի փայլուն քան արեւը, որ իջաւ աստիճանաբար մինչեւ որ վրաս ինկաւ:

Անմիջապէս որ այդ երեւցաւ, ինքզինքս ձերբազատուած գտայ թշնամիէն որ զիս գերեզմարած էր: Երբ լոյսը վրաս կեդրոնացաւ, երկու անձնաւորութիւններ տեսայ որոնց փառքն ու պայծառութիւնը վեր էին ամէն նկարագրութենէ: Անոնք օդին մէջ կանգնած էին ճիշդ իմ վերեւ: Անոնցմէ մին խօսեցաւ ինծի հետ, անունս տալով, ու միւսը ցոյց տալով ըսաւ. — «Այս է իմ սիրելի Որդիս, լսէ՛ զինք»:

Տիրոջ զիմելով, նպատակս հասկնալ, էր, թէ բոլոր ազանդներէն որն էր շիտակը, որպէսզի գիտնայի՝ որ մէկուն միանալ: Ուրեմն անմիջապէս որ ինքզինքս վերագտայ ու կարողացայ խօսիլ, իմ վերեւ, լոյսին մէջ կանգնած անձնաւորութիւններուն հարցուցի թէ



«Համաձայն Աստուծո՞ւ է խնդրելու
որոշումիս՝ պուրակի մը մէջ
ստանձնացայ, որպէսզի փորձեմ»

բոլոր ազանդներէն որն էր շիտակր, եւ որ մէկուն պէտք էր միանայի:

Ինծի պատասխանուեցաւ որ որեւէ մէկուն պէտք չէր որ միանայի, որովհետեւ անոնց բոլորն ալ ճշմարիտ չէին, եւ անձնաւորութիւնը որ ինծի ուղղեց, ըսաւ թէ անոնց հանգանակները իրեն համար գարշանք էին, եւ այդ խոստովանողները բոլորն ալ եղծանուած էին. թէ «Անոնք իրենց շրթներով ինծի կը մօտենան բայց իրենց սրտերը հեռու են ինձմէ. քանզի անոնք կը սորվեցնեն մարդոց պատուիրանները իբր վարդապետութիւն՝ ունենալով աստուածային երեւոյթ, սակայն անոնք կ'ուրանան Աստուծոյ զօրութիւնը»:

Ան նորէն զիս արգիլեց անոնցմէ մէկուն միանալ ու շատ ուրիշ բաներ ըսաւ զոր ես հիմա չեմ կրնար գրել: Երբ ամբողջովին զգաստացայ ես ինքզինքս կոնակի վրայ պառկած գտայ ու նայուածքս ալ՝ դէպի երկինք յառած:

Այս տեսիլքէն մի քանի օր ետք պատահեցաւ որ գտնուիմ Մեթոտական քարոզիչի մը հետ որ շատ գործունեայ էր վերոյիշեալ եկեղեցական շարժումներուն մէջ: Խօսելով իր հետ կրօնական նիւթերու շուրջ, առիթը գտայ իրեն պարզելու ունեցած տեսիլքս: Շատ զարմանալի գտայ իր վարմունքը. ան ոչ միայն թեթեւօրէն վերցուց ըսածս, այլ նաեւ մեծ նախատինք ցոյց տուաւ, ըսելով որ բոլոր պատահածը սատանայի գործ էր եւ թէ այդպիսի տեսիլքներ ու յայտնութիւններ չէին կրնար պատահիլ այս օրերուն: Աւելին՝ ան ըսաւ թէ բոլոր այս տեսակի բաները դադրած էին առաքեալներուն հետ եւ այլեւս բնաւ պիտի չպատահէին:


Շուտով գտայ թէ իմ պատմութիւնս կրօնականներուն մօտ մեծ նախապաշարում գրգռած էր իմ դէմս, եւ շատ հալածանքի պատճառ դարձած՝ որ հետզհետէ աւելի սաստկացաւ: Թէեւ աննշմարելի տղայ մըն էի, հազիւ 14-15 տարեկան, որուն կեանքի պայմանները այնպէս էին որ զինք անհետեւանք կը դարձնէին աշխարհի վրայ. սակայն եւ այնպէս մեծ դիրքերու տէր անձեր, բաւական

հետաքրքրութիւն ցոյց պիտի տային ինծի
հանդէպ եւ պատճառ պիտի դառնային
ժողովուրդին միտքը ինծի դէմ գրգռելու եւ
խիստ հալածանք մը ստեղծելու իմ դէմս —
հաւասարապէս բոլոր աղանդներուն կողմէ — եւ
բոլորն ալ միացած էին զիս հալածելու մէջ:

Այս հալածանքը այն ատեն եւ ատկէ ետք
յաճախ զիս լուրջ խորհրդածութիւններու մղեց:
Որքա՛ն տարօրինակ է. ինծի նման հազիւ 14
տարեկան աննշմար տղայ մը սահմանուած ըլլայ
աշխատիլ, շահելու համար իր աղքատիկ
օրապահիկը — սակայն եւ այնպէս մօտիկ
ապագային պիտի նկատուէր կարեւոր դէմք մը
եւ ուշադրութիւնը պիտի հրաւիրէր
ամենատարածուած աղանդներու
մեծամեծներուն, եւ այնպիսի կերպով մը, որ
իրեն շուրջ ամենախիստ հալածանքը պիտի
ստեղծէին: Տարօրինակ կամ ո՛չ, այդպէս էր, եւ
յաճախ այս բանը սաստիկ տխրութեանս
պատճառ կը դառնար:

Այսուհանդերձ իրականութիւն էր որ ես
տեսիլք մը տեսած էի: Անկէ ի վեր խորհած եմ
թէ զգացածս շատ նման էր Պօղոս Առաքեալին,
որ Ագրիպաս թագաւորին առջեւ ինքզինք
պաշտպանեց եւ պատմեց անոր իր տեսած
տեսիլքին մասին՝ թէ ան լոյս մը տեսաւ ու ձայն
մը լսեց. սակայն քիչեր կային որ անոր
հաւատացին. ոմանք ըսին թէ անպարկեշտ էր.
ուրիշներ ըսին թէ ան յիմար էր. եւ այսպէս
զայն ծաղրեցին ու նախատեցին: Սակայն այս
բոլորը որեւէ բան չջնջեցին իր տեսիլքին
իրականութենէն: Ան տեսիլք մը տեսած էր, ան
գիտէր թէ զայն տեսած էր եւ նոյնիսկ երկնքի
տակ գտնուող բոլոր տեսակի հալածանքները
չէին կրնար այդ իրականութիւնը փոխել: Թէեւ
զինք պիտի հալածէին, սակայն ան գիտէր, եւ
պիտի գիտնար մինչեւ վերջին շունչը, որ ինք
լոյս մը տեսած էր, թէ իրեն խօսող ձայն մը լսած
էր, եւ թէ ամբողջ աշխարհը կարող չէր զինք այլ
կերպ խորհեցնել կամ հաւատացնել:

Իմ վիճակս ալ նոյնն էր: Ես իրապէս լոյս մը
տեսած էի, եւ այդ լուսախուրձին մէջէն տեսած



«Տեսայ լոյսի սիւն մը ճիշդ գլխուս
վերեւ»

էր երկու անձնաւորութիւններ որոնք իրականութեան մէջ խօսեցան ինծի: Թէեւ ես տեսիլք մը տեսած ըլլալս պատմելու համար անարգուեցայ ու հալածուեցայ՝ սակայն ճշմարտութիւնն էր: Մինչ այդ որ զիս կը հալածէին, կը նախատէին եւ ամէն տեսակ շարութիւն կը խօսէին՝ ու սուտ գրպարտութիւններ կ'ընէին իմ դէմս՝ այդ բաները պատմելու համար, ես սրտիս մէջ կը խորհէի. — Ինչո՞ւ արդեօք ճշմարտութիւնը խօսած ըլլալու համար զիս կը հալածէին: Ես իրականութեան մէջ տեսիլք մը տեսած էի. — Ես ո՞վ եմ որ պիտի կարենայի Աստուծոյ դէմ դնել, կամ ինչո՞ւ աչքով տեսածս կը ստիպէին զիս ուրանալ: Ես տեսիլք մը տեսած էի. ես այս բացայայտ գիտէի եւ գիտէի թէ Աստուած ալ գիտէր, ու չէի կրնար ուրանալ, ոչ ալ կը համարձակէի ուրանալ. առնուազն՝ գիտէի թէ այդպէս ուրանալով Տէրը պիտի նախատէի ու դատապարտութեան ենթակայ պիտի ըլլայի:

Այլ միտքս հանդարտ էր որովհետեւ կրօնական հատուածներէն ո՛չ մէկուն միանալու պարտաւոր էի, եւ այսպէս պիտի շարունակէի մինչեւ ուրիշ հրաման մը տրուէր ինծի: Յակոբօսի վկայութիւնը ճշմարիտ էր. — Ոեւէ մարդ, որուն իմաստութիւն կը պակսէր, կրնար խնդրել զայն Աստուծմէ եւ ստանալ զայն առանց ցախատիցի:

Մորոնիի Այցը

Շարունակեցի առօրեայ գործունէութիւններս մինչեւ 21 Սեպտ. 1823, նոյն ատեն խիստ հալածանքներու ենթարկուելով, կրօնաւոր եւ աշխարհական ամէն դասակարգի մարդոց կողմէ, որովհետեւ կը շարունակէի հաստատել թէ տեսիլք մը տեսած էի:

Տեսիլք տեսած օրէս մինչեւ 1823 թուականը ինծի արգիլուած ըլլալով միանալ որեւէ կրօնական աղանդի, եւ ըլլալով երիտասարդ ու հալածուած՝ բոլոր այն մարդոց կողմէ որոնք

պէտք էր բարեկամներս ըլլային եւ ազնուօրէն վարուէին հետս, կամ եթէ զիս կորսուած կը նկատէին՝ վայելուչ եւ սիրալիր միջոցաւ վերագտնէին զիս, ես մնացի զանազան փորձութեանց առջեւ եւ խառնուելով այլազան ընկերութեանց մէջ, յաճախ տխմար սխալներու մէջ ինկայ: Ես երիտասարդական ու մարդկային բնութեան տկարութիւնները ցուցաբերեցի եւ կը ցաւիմ ըսելու, որ անոնք զիս մղեցին զանազան տեսակի Աստուծոյ անհաճոյ փորձութիւններու: Այս խոստովանութենէն պէտք չէ ենթադրել որ ես մեծ ու նենգ մեղքեր գործած ըլլամ — իմ բնութեանս մէջ երբեք այդ աստիճանի մեղքեր գործելու հակումը չէր գտնուեր:

Ի հետեւանք այս եղելութեանց յաճախ իմ անկատարութիւններուս եւ տկարութիւններուս համար դատապարտուած կը զգայի: Երբ վերոյիշեալ 21 Սեպտեմբերի գիշերը անկողինս քաշուած կ'աղօթէի աղերսանքի ամենակարող Աստուծոյ, ներողամտութիւն խնդրելու՝ իմ բոլոր գործած մեղքերուս եւ ցնորքներուս համար: Նոյնպէս Աստուծմէ խնդրեցի որ յայտնութիւն մը ընէր, որպէսզի ես գիտնայի իմ վիճակս ու կեցուածքս իրեն հանդէպ. որովհետեւ վստահ էի Աստուծային լրիւ յայտնութիւն մը ստանալուս — ինչպէս նախապէս պատահեցաւ:

Մինչ կ'աղերսէի Աստուծոյ, լոյս մը սկսաւ երեւնալ սենեակիս մէջ որ հետզհետէ աւելի կը փայլէր — ու վերջապէս սենեակս կէսօրուան արեւի լոյսէն աւելի լուսաւորուեցաւ:

Անմիջապէս անձնաւորութիւն մը երեւցաւ սնարիս կողքին, կանգնած օդին մէջ, քանի իր ոտքերը տախտակամածին չէին դպչեր:

Գերազանց ճերմակութիւն ունեցող վերարկու մը հագած էր: Անոր ճերմակութիւնը կը գերազանցէր որեւէ երկրային նման բան՝ որ ես երբեք տեսած ըլլայի. եւ չեմ ալ կրնար հաւատալ որ երկրային բան մը, կրնայ այսքան չափազանց ճերմակ ու պայծառ երեւնալ: Բազուկները մերկ էին մինչեւ դաստակները, նոյնպէս իր ոտքերն ալ մինչեւ սրունքները մերկ էին: Իր գլուխը եւ



«Անձնատրոթին մը (Մօրոնի)
երեւցաւ սնարիս կողքին, ... ու
ըսաւ ... թէ Աստուած ինձի
ատաքելութիւն մը վերապահած էր»

վիզր ծածկուած չէին: Ես զգացի թէ ան որեւէ հագուստ չունէր այդ վերարկուին տակ. քանզի իր վերարկուն բաց ըլլալով կրցայ մինչեւ կուրծքը տեսնել:

Ոչ միայն իր հագուստը գերազանցօրէն ճերմակ էր, այլ նաեւ իր անձը աննկարագրելիօրէն վեհ էր ու իր երեւոյթը, յար ու նման փայլակի: Սենեակը շափազանցօրէն լուսաւոր էր. սակայն նուազ չլացուցիչ էր քան զինք պարուրող լոյսը: Երբ առաջին անգամ նայեցայ իրեն, վախցայ. բայց շուտով վախս փարատեցաւ:

Անունովս կանչեց զիս ու յայտնեց թէ ինք Աստուծոյ կողմէ դրկուած սուրհանդակ մըն էր, թէ ինք կը կոչուէր Մօրօնի. թէ՛ Աստուած ինծի առաքելութիւն մը վերապահած էր, եւ թէ՛ իմ անունս պիտի ըլլար բարի ու շար բոլոր ազգերու, ազգակիցներու եւ լեզուներու մէջ. ինչպէս նաեւ՝ պիտի ըլլար փառաբանուած կամ շարախօսուած բոլոր ժողովուրդներու մօտ:

Ան ըսաւ թէ՛ ոսկեայ թղթիկներու (տախտակներու) վրայ գրուած գիրք մը կայ որուն մէջ կը պատմուի այս աշխարհամասի (Ամերիկայի) հին բնակիչներուն մասին, ու կը խօսի անոնց ծագման մասին: Անիկա նմանապէս յայտնեց թէ Աւետարանին յաւիտենական ամբողջութիւնը անոր մէջ կը պարփակուէր, ինչպէս որ Փրկիչը հին բնակիչներուն փոխանցած էր:

Նաեւ այս տախտակներուն հետ արծաթեայ զսպանակներով հաստատուած երկու քարեր կային: Այս քարերը լանջապանակի մը կապուած էին ու կը կազմէին այն ինչ որ կոչուած էր «Ուրիմ եւ Թուփիմ»: Այս քարերուն տիրացողները ու զանոնք գործածողները հինուց տեսանող կը կոչուէին — եւ Աստուած զանոնք պատրաստած էր այդ գիրքը թարգմանելու համար:

Այս բաները ըսելէն ետք, ան սկսաւ մէջբերել Հին Կտակարանի մարգարէութիւններէն: Ան առաջին անգամ մէջբերեց Մաղաքիայի երրորդ գլուխէն մաս մը, ապա՝ չորրորդ կամ վերջին

գլուխը — թէեւ քիչ մը տարբեր էր մեր ունեցած Ս. Գրքին մէջի գրուածքէն: Ան փոխանակ առաջին հատուածը մէջբերելու ինչպէս մեր Ս. Գրքին մէջ գրուած է, ան հետեւեալը ըսաւ. —

«Ահա, օրը պիտի գայ երբ հպարտները պիտի այրին փուռը նետուածներու պէս: Այո՛, բոլոր անբարեկիրթները պիտի այրին յարգի պէս. որովհետեւ իրենցմէ յետոյ եկողները զիրենք պիտի այրեն, կ'ըսէ զօրաց Տէրը, եւ անոնցմէ արմատ ու ճիւղ մը իսկ պիտի չձգէ»:

Ապա հինգերորդ համարն ալ հետեւեալ կերպով ըսաւ. — «Ահա՛, Տիրոջ մեծ ու ահեղ օրը չեկած Եղիա մարգարէի միջոցաւ Տիրոջ քահանայութիւնը պիտի յայտնել տամ»:

Ան նոյնպէս յաջորդ համարն ալ տարբեր կերպով մէջբերեց. — «Եւ Ան պատիկներուն սիրտերուն մէջ պիտի ցանէ իրենց հայրերուն եղած խոստումը. ու պատիկներուն սիրտերը պիտի դառնան իրենց հայրերուն՝ որովհետեւ եթէ այդպէս չըլլայ ամբողջ աշխարհը անտեղիօրէն պիտի փճանայ իր Գալստեան Օրը»:

Ասոնց հետ միատեղ ան Եսայի մարգարէի 11րդ գլուխը մէջբերեց, ըսելով որ արդէն կատարելագործման մէջ է: Նմանապէս ան Գործք Առաքելոցի երրորդ գլխուն 22րդ եւ 23րդ համարները մէջբերեց ճիշդ ինչպէս որ անոնք մեր Նոր Կտակարանին մէջ կ'երեւին: Ան ըսաւ, թէ այդ մարգարէն Յիսուսն էր — բայց այդ օրը տակաւին չէր եկած երբ «Զինք չլսողները պիտի զատուէին ժողովուրդին մէջէն», սակայն շուտով պիտի գար:

Յովելի երկրորդ գլուխ, 28րդ համարէն մինչեւ այդ գլխուն վերջին համարը մէջբերեց: Ան նոյնպէս ըսաւ թէ անհկա չէր կատարուած, սակայն շուտով պիտի կատարուէր: Ան նոյնպէս հաստատեց, թէ հեթանոսներուն բոլորն ալ մօտ օրէն պիտի դարձի գային: Ան մէջբերեց նաեւ ուրիշ համարներ Ս. Գրքէն ու տուաւ երկար բացատրութիւններ զորս հոս կարելի չէ յիշել:

Ան կրկին պատուիրեց, թէ այդ ոսկեայ տախտակներուն ինչպէս նաեւ Ուրիմն ու Թուփիմի լանջապանակները առնելու ժամը գար,

վասնզի տակաւին զանոնք առնելու ժամը չէր հասած — մէկուն պէտք չէ ցոյց տայի, բացի անոնց՝ որոնք յանձնարարուած էին: Ապա թէ ոչ պիտի կործանէի: Մինչ ան կը զրուցէր տախտակներուն մասին, աչքերուս առջեւ մտային տեսիլք մը պարզուեցաւ, ու ես յստակօրէն տեսայ տախտակներուն զետեղուած վայրը, այնքան յստակ ու հասկնալի՝ որ երբ այցելեցի այդ վայրը, շուտով ճանչցայ:

Այս հաղորդակցութենէն ետք նշմարեցի թէ սենեակիս լոյսը սկսաւ տակաւ առ տակաւ ամփոփուիլ անոր անձին շուրջ: Այսպէս շարունակուեցաւ մինչեւ որ սենեակս մթութեան մէջ մնաց — բացի իր շուրջէն: Յանկարծ լոյսի ճամբայ մը բացուեցաւ դէպի երկինք եւ ան սկսաւ համբարնալ մինչեւ որ ամբողջովին անհետացաւ եւ սենեակս իր նախկին վիճակը վերագտաւ:

Երբ ես այս եզակի տեսարանին վրայ կը հիանայի եւ աւետաբերի խօսքերուն վրայ զարմանքով կը խորհէի՝ յանկարծ սենեակս նորէն լուսաւորուելու սկսաւ: Ակնթարթի մը մէջ նոյն երկնային աւետաբերը անկողինիս կողքին գտայ:

Ան սկսաւ պատմել նոյն բաները որ առաջին անգամ պատմած էր առանց դոյզն փոփոխութեան: Այս ըսելէն ետք, ինծի տեղեկացուց մեծ դատաստաններու մասին. ինչպէս նաեւ սովի պատճառաւ, ամայութեանց մասին որոնք աշխարհի վրայ պիտի գային սուրով ու համաճառակով, եւ թէ այս ցուալի դատաստանները պիտի գային այս սերունդին մէջ իսկ: Այս բաները պատմելէ ետք ան կրկին համբարձաւ — ինչպէս որ նախապէս ըրած էր:

Այս ժամանակ այնքան խորունկ տպաւորութիւններով բեռնաւորուած էր ուղեղս որ քունս աչքերէս փախած էր: Տեսածներուս ու լսածներուս զմայլանքէն կլանուած երկարած էի: Բայց ինչ որ զիս զարմացուց այն էր թէ՛ ան նորէն եկաւ եւ կրկնեց նոյն բաները որ ինծի նախապէս ըսած էր: Ան աւելցուց որ սատանան զիս փորձութեան պիտի ենթարկէր ի հետեւանք

ծնողքիս նիւթական նեղ պայմաններուն — որպէսզի ոսկեայ տախտակները հարստանալու համար գործածեմ: Ան արգիլեց ինծի այդպէս ընել, ըսելով թէ՛ ոսկեայ տախտակները պէտք է առնէի միայն Աստուծոյ փառաւորումը որպէս նպատակ ունենալով: Ես պէտք չէ ազդուէի ուրիշ որեւէ նպատակէ բացի Անոր թագաւորութիւնը շինելէ. այլապէս՝ ես չէի կրնար վերոյիշեալ տախտակները ստանալ:

Այս երրորդ այցելութենէն ետք ան կրկին անգամ երկինք բարձրացաւ եւ ես նորէն մինակ մնացի սենեակիս մէջ խորհրդածելու համար անցուցած փորձառութեանս տարօրինակութեան վրայ: Երբ աքաղաղին կանչը լսեցի, Աստուածային առաքեալին երրորդ այցէն ետք, զգացի թէ ցերեկը կը մօտենար եւ մեր խօսակցութիւնը ուրեմն ամբողջ գիշերը տեւած ըլլալու էր:

Քիչ ետք, երբ անկողինէս ելայ եւ ուղղուեցայ սովորականին պէս առօրեայ գործերս կատարելու, թէեւ կը փորձէի աշխատիլ նման ուրիշ ժամանակներու, բայց ինքզինքս բոլորովին ուժասպառ եւ անկարող գտայ: Հայրս որ ինծի հետ կ'աշխատէր նշմարեց որ բան մը ունէի ու պատուիրեց որ տուն երթամ: Երբ ես տուն երթալու նպատակաւ կը փորձէի անցնիլ դաշտին ցանկապատը, ուժս սպառեցաւ եւ ես անօգնական գետին փռուեցայ ու ժամանակի մը համար անզգայ հոն մնացի:

Առաջին բանը որ կը յիշեմ ձայն մըն էր որ իմ անունովս զիս կը կանչէր: Վեր նայեցայ եւ տեսայ նոյն երկնային սուրհանդակը գլխուս վերեւ կանգնած եւ առաջուան պէս շրջապատուած լոյսով:

Ան նորէն պատմեց ինծի նոյն բաները զոր անցեալ գիշեր պատմած էր ու պատուիրեց ինծի երթալ ու հօրս պատմեց տեսիլքիս ու պատուիրաններուն մասին որ ես ստացած էի:

Հնազանդեցայ: Վերադառնալով դաշտ, հօրս պատմեցի ամբողջ խնդիրը: Ան ըսաւ թէ այս բոլորը Աստուծմէ էին, եւ ես պէտք էր որ ընէի Աստուածային սուրհանդակին պատուիրածին

պէս :

Դաշտը ձգեցի եւ գացի այն վայրը ուր երկնային պատգամաբերը ըսած էր թէ կը գտնուէին Ոսկեայ Տախտակները : Երբ հոն հասայ շուտով գտայ վայրը, քանզի տեսիլքիս մէջ յստակօրէն տեսած էի :

Սուրբ Գրուածքներ

Նիւ Եօրք նահանգին, Օնթարիօ կուսակալութեան, Մանչէսթըր գիւղին մէջ նշանակելի մեծութեամբ բլուր մը կայ, որ այդ շրջակայքի բլուրներուն մէջ ամենաբարձրն է : Այս բլուրին արեւմտեան կողմը, գագաթէն ոչ այնքան հեռու, բաւական մեծ քարի մը տակ ոսկեայ տախտակները, քարէ սնտուկի մը մէջ պահուած էին : Այս քարին վերի կողմը, մէջտեղի մասէն կլոր ու հաստ էր : Իսկ եզերքները բարակ էին, այնպէս որ մէջտեղի մասը գետնէն վեր կ'երեւար. սակայն եզերքները հողով ծածկուած էին :

Հողը վերցնելով, լծակ մը առի եւ գայն ամրացուցի քարին տակ. քիչ մը ուժ բանեցնելով գայն վեր բարձրացուցի : Մէջը նայեցայ եւ յիրաւի տեսայ Ուրիմն ու Թումիմը եւ լանջապանակը — ինչպէս որ երկնային պատգամաւորը հաղորդած էր : Մնտուկը որուն մէջ գետեղուած էին, շինուած էր քարերէ որոնք իրարու միացուած էին տեսակ մը շաղախով : Այս սնտուկին խորը խաչաձեւ երկու քարեր գետեղուած էին եւ անոնց վրայ դրուած էին տախտակները ինչպէս նաեւ միւս առարկաները :

Փորձեցի գանոնք դուրս հանել, սակայն երկնային պատգամաւորին կողմէ արգիլուեցաւ ինծի : Կրկին անգամ լուսաբանուեցայ թէ գանոնք դուրս հանելու ժամանակը տակաւին չէր եկած — սակայն պիտի գար, այս թուականէս չորս տարի ետք : Բայց ան ըսաւ թէ այս տեղը պէտք էր որ յաճախէի ճիշդ տարի մը ետք, եւ թէ՛ հոն իրեն պիտի հանդիպէի, եւ այսպէս պիտի շարունակուէր ամէն տարի մինչեւ որ

ոսկեայ տախտակները առնելու ժամանակը հասնէր:

Համաձայն պատուիրանին, ամէն տարեվերջին կը յաճախէի եւ ամէն անգամ երկնային պատգամաւորը հոն կը գտնէի եւ մեր զրոյցներուն ընթացքին իրմէ կը ստանայի հրահանգներ ու իմաստուն խօսքեր. — Թէ ինչպէս Երկնային Տէրը պիտի գործէր եւ թէ՛ ինչպէս իր թագաւորութիւնը պիտի կառավարուէր վերջին օրերուն:

Նկատի ունենալով հօրս սահմանափակ նիւթական վիճակը, ստիպուած էինք աշխատիլ ու երբեմն ալ՝ վարձուիլ օրականով — համաձայն ներկայացուած առիթներուն: Երբեմն տունն էինք ու երբեմն ալ դուրսը, եւ յարատեւ աշխատանքով կարողացանք հանգիստ ապրուստ մը ապահովել:

1825-ի Հոկտեմբեր ամսուն, Նիւ Եօրք նահանգի Չինանկօ կուսակալութեան մէջ բնակող, Ճօղայա Սթօլ անունով երէց ազնուականի մը մօտ աշխատելու սկսայ: Աշխատած միջոցիս կը բնակէի Բէնսիլվանիա նահանգի, Սուսգահանա կուսակալութեան, Հարմօնի քաղաքէն, Պրն. Իսահակ Հէյլի մօտ: Հոն էր որ առաջին անգամ տեսայ իմ ապագայ կինս (որ իր դուստրն էր), էմմա Հէյլը: 1827 Յուն. 18-ին ամուսնացանք — երբ ես կ'աշխատէի Պրն. Սթօլի մօտ: Ամուսնութենէս անմիջապէս ետք, Պրն. Սթօլը ձգեցի ու գացի հօրս մօտ, եւ այդ եղանակին իրեն հետ հողագործութիւն ըրի:

Վերջապէս տախտակները, Ուրիմն ու Թումիմը եւ լանջապանակը առնելու ժամանակը հասաւ: 1827 Սեպտ. 22-ին, երբ ըստ սովորականին գացած էի նոյն վայրը այցելելու, պարտականութիւնս կատարելու, երկնային պատգամաւորը զանոնք ինծի յանձնեց հետեւեալ պատասխանատուութեամբ. — Թէ՛ ես անոնց պատասխանատու պիտի ըլլայի, թէ՛ եթէ իմ կողմէս անուշադրութեամբ եւ անհոգութեան պատճառաւ կորսուէին — այն ատեն ես պիտի դատապարտուէի: Սակայն եթէ կարելիս ընէի զանոնք պահպանելու, մինչեւ որ ինքը՝


երկնային աւետարերր, զանոնք ետ պահանջէր, անոնք պիտի պաշտպանուէին:

Շուտով գտայ թէ ինչու այսքան խիստ հրահանգներ ստացած էի զանոնք ապահով կերպով պահելու համար, եւ նոյնպէս, թէ ինչու համար զանոնք պէտք էր որ ետ վերադարձնէի երբ պարտականութիւնս աւարտէի: Հազիւ թէ մարդիկ տեղեկացան թէ ես ոսկեայ տախտակներ ունէի, զանազան խիստ ուժեր վրաս սկսան բանեցուիլ որպէսզի զանոնք խլէին ինձմէ: Բազմաթիւ միջոցներու գիմեցին իրենց նպատակին հասնելու համար:

Հալածանքը աւելի ու աւելի սաստկացաւ ու բազմութիւններ ահագանգի մէջ էին. կը փորձէին զանինք ինձմէ խլել: Բայց Աստուծոյ իմաստութեան շնորհիւ ոսկեայ տախտակները ձեռքերուս մէջ ապահով մնացին մինչեւ որ ինձմէ պահանջուածը լիովին կատարեցի: Համաձայն կարգադրութեան, երբ երկնային պատգամաւորը ետ ուզեց զանոնք, ես յանձնեցի իրեն եւ այդ թուականէն մինչեւ այսօր, Մայիս 2, 1838, անոնք իր տրամադրութեան տակ են:

Գրգռութիւնը սակայն շարունակուեցաւ ու հազարումէկ տարածայնութիւններ կատարուեցան: Իմ ու հօրս ընտանիքին շուրջ սուտ պատմութիւններ հիւսեցին: Եթէ ես անոնց մէկ հազարերորդը փորձեմ պատմել, կրնամ հատորներ լեցնել: Հալածանքը սակայն այնքան սաստկացաւ եւ այնքան անտանելի եղաւ որ ես հարկադրուեցայ ձգել Մանչէսթըրը իմ տիկնոջս հետ, եւ երթալ Բէնսիլվանիա նահանգի Սուսպահանա կուսակալութիւնը: Երբ կը պատրաստուէինք մեկնիլ, չափազանց աղքատ էինք ու ծանրաբեռնուած՝ հալածանքներով: Մեր այս ղժուարութեանց մէջ գտանք բարեկամ մը, յանձին Պրն. Մարթին Հարիս՝ որ մեզի եկաւ եւ 50 տոլար տուաւ մեր ճամբորդութիւնը գիւրացնելու համար: Մարթին Հարիսը, Նիւ Եօրք նահանգի, Վէյն կուսակալութեան, Բալմիրա քաղաքին մէջ բնակող պատուաւոր երկրագործ մըն էր:

Տեղին եղող օգնութեան շնորհիւ կարողացայ



«Վերջապէս թերթիկները առնելու
ժամանակը հասաւ»

իմ մտադրած տեղս հասնիլ Բէնսիլվանիա նահանգի մէջ: Հասնելէս անմիջապէս ետք, սկսայ ոսկեայ թերթիկներուն վրայի տառերը ընդօրինակել: Անոնցմէ բաւական ընդօրինակեցի եւ շնորհիւ Ուրիմին ու Թումիմին անոնցմէ մաս մըն ալ թարգմանեցի: Այս ըրի, իմ աներհօրս տունը հասնելէս, այսինքն՝ Դեկտեմբերէն, մինչեւ յաջորդ Փետրուար:

Փետրուարի մէջ օր մը, նախապէս յիշուած Պրն. Հարիսը մեր մօտ եկաւ, եւ ստացաւ իմ ոսկեայ թերթիկներուս վրայէն ընդօրինակած գրութիւններս: Ան առնելով զանոնք ուղղուեցաւ Նիւ Եօրք քաղաքը: Թէ ինչ պատահեցաւ իրեն ու գրութիւններուն, պիտի մէջբերեմ, իր անոնց մասին պատմածը որ հետեւեալն է.—

«Ես Նիւ Եօրք քաղաքը գացի եւ ներկայացուցի տառերը եւ անոնց թարգմանութիւնը Փրօֆ. Չարլզ Անթօնին: Ան ազնուական մըն էր, ծանօթ իր գրական կարողութիւններով: Ան հաստատեց թէ թարգմանութիւնը շատ ճշգրիտ էր եւ թէ՛ ինք տակաւին այսքան ճշգրիտ թարգմանութիւն չէր տեսած եգիպտական լեզուէ: Յետոյ իրեն ցոյց տուի չթարգմանուած մասը: Ան ըսաւ թէ անոնք Եգիպտական, Քաղթէական եւ Ասորական եւ Արաբական ճշմարիտ նշանագրեր էին: Ան ինծի վկայագիր մը տուաւ հաստատելով Բալմիրայի բնակչութեան թէ անոնք ճշմարիտ նշանագրեր էին, եւ թէ անոնց թարգմանութիւնն ալ ճիշդ էր: Ես առի վկայագիրը ու գրպանս դրի եւ երբ ես տունէն դուրս կ'ելլէի, պրն. Անթօնը զիս ետ կանչեց ու հարցուց թէ ինչպէս երիտասարդ մը հասկցած էր ոսկեայ թերթիկներուն վայրը: Ես պատասխանեցի թէ Աստուածային հրեշտակ մը իրեն ցոյց տուած էր:

«Ան յետոյ աւելցուց ըսելով.— Նայիմ այդ վկայագրին, եւ ես զայն իրեն ետ տուի: Ան առաւ ու պատռեց ըսելով որ ներկայիս Աստուածային հրեշտակներ չկան եւ եթէ ոսկեայ թերթիկները իրեն բերէի ան պիտի թարգմանէր զանոնք: Ես իրեն յայտնեցի թէ ոսկեայ թերթիկներէն որոշ մաս մը կնքուած էին եւ ես

արտօնուած չէի զանոնք բերելու: Ան պատասխանեց. — Ես չեմ կրնար կնքուած գիրք մը կարդալ: Ես ձգեցի զինք ու գացի Տոքթ. Միշէլին մօտ որ կրկնեց ինչ որ Փրոֆ. Անթօնը ըսած էր նշանագրերուն եւ անոնց թարգմանութեան մասին»:

1829-ը Ապրիլ 5-ին Օլիվըր Քաուտերիյը տունս եկաւ. ատկէ առաջ բնաւ զինք չէի տեսած: Ան ըսաւ թէ հօրս բնակած շրջակայքին մէջ դպրոցի մը ուսուցիչն էր: Ան այդ շրջանին բնակած էր հօրս տունը ուր լսած էր իմ մասիս եւ իմ ոսկեայ տախտակները ստանալու մասին, եւ ուրեմն եկած էր հարցուփորձեր կատարելու:


Պրն. Քաուտերիյի ժամանումէն երկու օր ետք (Ապրիլ 7-ին), ես սկսայ թարգմանել Մօրմոնի Գիրքը եւ ինքն ալ սկսաւ ընդօրինակել:

Քահանայութիւնը

Վերահաստատում

Մենք շարունակեցինք թարգմանութեան գործը: Յաջորդ ամսուան մէջ օր մը (Մայիս 1829), պուրակ գացած էինք աղօթելու, եւ Աստուծմէ բացատրութիւն խնդրելու մկրտութեան ու մեղքերու թողութեան մասին, որ մենք գտած էինք Ոսկեայ Թերթիկներուն թարգմանութեան ընթացքին: Երբ մենք տարուած էինք աղօթելով ու կ'աղաչէինք Աստուծոյ — երկնային պատգամաւոր մը երկինքէն վար եկաւ շրջապատուած լուսաւոր ամպով մը: Անիկա իր ձեռքերը մեր գլխուն վրայ դրաւ եւ մեզ ձեռնադրեց հետեւեալը ըսելով. —

«Զեզի, ո'վ իմ պաշտօնակից ծառաներս, յանուն Մեսիայի կը շնորհեմ Ահարոնի Քահանայութիւնը, որ ունի բանալիները հրեշտակներուն սպասարկութեան, եւ զղջումի ու մեղքերու թողութեան համար՝ ջուրի մէջ մխրձումով մկրտութեան ակտարանին. եւ այս Քահանայութիւնը բնաւ երկրէն ետ պիտի



«Սկսալ թերթիկներուն վրայի
տառերը ընդօրինակել»

չառնուի, մինչեւ որ 'Լէվիի զաւակները նորէն արդարութեամբ Աստուծոյ զոհ մատուցանեն»:

Ան ըսաւ թէ Ահարոնի Քահանայութիւնը ձեռք դնելով Ս. Հոգին պարգեւելու կարողութիւնը չունէր, սակայն այն հետագային պիտի տրուէր մեզի: Ան մեզի պատուիրեց երթալ ու մկրտուիլ: Ուղղութիւն տուաւ որ ես Օլիվըր Քառտերիյին պէտք էր որ մկրտէի եւ ապա, ան ալ իր կարգին գրիս:

Համաձայնելով մենք գացինք ու մկրտուեցանք: Նախ, ես զինք մկրտեցի, ապա ինք ալ գրիս: Ապա ձեռքերս իր գլխուն վրայ գետեղելով զինք Ահարոնի Քահանայութեան ձեռնադրեցի: Ինք ալ իր կարգին ձեռքերը իմ գլխուս վրայ գետեղեց ու գրիս նոյն Քահանայութեան ձեռնադրեց — քանզի մեզի այսպէս պատուիրուած էր:

Այն պատգամաւորը որ մեզի այցելեց ու տուաւ Ահարոնի Քահանայութիւնը, ըսաւ թէ իր անունը Յովհաննէս էր եւ թէ ինք նոյն Յովհաննէսն էր որ Նոր Կտակարանին մէջ կը կոչուի՝ Յովհաննէս Մկրտիչ: Ան մեզի հաղորդեց թէ ինք Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննու ցուցմունքներուն կը հետեւէր որոնք Մելքիսեդեկական քահանայութեան բանալիները ունէին: Այդ քահանայութիւնը մեզի ժամանակի ընթացքին պիտի տրուէր եւ ես Եկեղեցւոյ առաջին Երէցը պիտի ըլլայի, իսկ Օլիվըր Քառտերիյը՝ երկրորդը: 1829ը Մայիսի 15րդ օրն էր որ մենք մկրտուեցանք ու ձեռնադրուեցանք այս երկնային պատգամաւորին հրահանգով:

Մկրտուելէ ետք անմիջապէս որ ջուրէն դուրս եկանք, երկնային հօր կողմէ հրաշալի օրհնութեանց փորձառութիւնը ունեցանք: Հազիւ թէ Օլիվըր Քառտերիյը մկրտած էի Ս. Հոգին իր վրայ եկաւ, ու ան կանգնելով սկսաւ մարգարէութիւններ ընել բաներու մասին որոնք շուտով պիտի պատահէին: Ես ալ անմիջապէս որ մկրտուեցայ իր կողմէ, ստացայ Ս. Հոգիին այցելութիւնը: Իմ կարգիս ես ալ սկսայ մարգարէութիւններ ընել այս Եկեղեցւոյ բարգա-

լաճման մասին եւ այլ բաներու մասին որոնք կապ ունէին այս Եկեղեցւոյ հետ, ինչպէս նաեւ ներկայ սերունդին մասին: Մենք լեցուած էինք Ս. Հոգիով եւ ուրախ էինք մեր Աստուծով:

Մեր միտքերը լուսաւորուած ըլլալով Ս. Գրութիւնները մեր հասկացողութեան առջեւ բացուիլ սկսան: Անոնց խորհրդաւոր համարներուն ճշմարիտ իմաստն ու նպատակը մեզի այնպիսի կերպով յայտնուեցաւ որ նախապէս անկարելի էր նոյնիսկ այդ մասին մտածել: Միեւնոյն ատեն մենք ստիպուած էինք մեր մկրտուելին ու քահանայութիւն ստանալը գաղտնի պահել, որովհետեւ հալածանքի ոգի մը արդէն մեր շրջակայքին մէջ սկսած էր աճիլ:


Ժամանակ առ ժամանակ մարդիկ մեզի սպառնացին՝ նոյնիսկ կրօնքի մարդիկը: Ժողովուրդին կողմէ չարչարուելէ ազատեցանք շնորհիւ իմ կնոջս ընտանիքին ունեցած ազդեցութեան (Աստուածային ազդեցութեան) որոնք ինձի հետ շատ մտերմացած էին ու դէմ էին խուժաններու. եւ անոնք յօժար էին որ ես շարունակէի թարգմանութեան գործը առանց ընդմիջումի: Ուրեմն անոնք մեզ պաշտպանել խոստացան ընդդէմ բոլոր անօրէն արարքներու, որքան որ իրենք կարող էին: (Ճօզէֆ Սմիթհ 2.1-75):

Վկաներ

Թարգմանութեան շրջանին, մենք հաստատեցինք թէ երեք վկաներ պիտի տրամադրուէին Աստուծոյ կողմէ, որոնց Ան պիտի արտօնէր տախտակները տեսնելու — ուրկէ Մօրմոնի Գիրքը պիտի թարգմանուէր. եւ թէ այս վկաները պիտի վկայէին այն բաներուն, ինչպէս որ Մօրմոնի Գրքին, Եթերի Գիրքի, հինգերորդ գլուխ, 2րդ, 3րդ եւ 4րդ համարներուն եւ Երկրորդ Նեփիի, տասներորդ գլուխ, 3րդ համարին մէջ պիտի գտնուէր: Գրեթէ անմիջապէս այս գիտութիւնը ունենալէ ետք, Օլիվըր Քաուտերիյ, Տէյվիտ Ուիթմըր եւ Մարթին Հարիս հարց տուին ինձի ըսելով թէ



«Մայիս 15, 1829-ին Յովհաննէս
Մկրտիչը Ճօզէֆ Սմիթիի եւ
Օլիվըր Բաուտերիի վրայ շնորհեց
Ահարոնական Քահանայութիւնը»



«Մելքիսեդեքական
Քահանայութիւնը ստացուեցաւ
Պետրոսի, Յակոբոսի եւ
Յովհաննէսի ձեռամբ»

այդ մասնայատուկ երեք վկաները իրենք կրնային ըլլալ: Ու խնդրեցին որ Տիրոջ հարցնեմ: Տիրոջմէ իմացայ որ անոնք կարող էին ըլլալ այդ մասնայատուկ վկաները:

Մի քանի օր ետք Մարթին Հարիս, Տէյվիտ Ուիթմըր, Օլիվըր Քառուտերիյ եւ ես, համաձայնեցանք քաշուիլ պուրակի մը մէջ ուր պիտի փորձէինք ոգեշունչ ու խոնարհ աղօթքներով ստանալ տրուած խոստումներուն լիացումը, այսինքն՝ անոնք պիտի կարողանային տեսնել տախտակները: Համաձայնեցանք քաշուիլ Պրն. Ուիթմըրի տան մօտ գտնուող յարմար պուրակի մը մէջ: Հոն ծնրադրելով սկսանք ամենահզօր Աստուծմէն խնդրել՝ մեծ հաւատքով, այս խոստումներուն իրականացումը:

Նախապէս եղած կարգադրութեամբ ես սկսայ բարձրաձայն, մեր Երկնային Հօր աղօթել եւ ինծի հետեւեցան յաջորդաբար միւսները: Սակայն առաջին փորձէն չստացանք որեւէ նշան կամ յայտնութիւն: Մենք նորէն ջերմերանդօրէն աղօթեցինք Աստուծոյ, նոյն շարքը պահելով. բայց ոչինչ կրկին յայտնուեցաւ:

Ասոր վրայ Մարթին Հարիս առաջարկեց քաշուիլ մեր մէջէն, հաւատալով որ, ինչպէս ինք կ'ըսէր՝ իր ներկայութիւնն էր որ պատճառ կը դառնար մեր փափաքածը չստանալնուս: Ուրեմն ան քաշուեցաւ, եւ մենք կրկին ծնրադրեցինք եւ շատ շանցած սկսանք մեր վերել լոյս մը տեսնել, օդին մէջ, չափազանցօրէն փայլուն. նոյն ժամանակ տեսանք հրեշտակ մը որ մեր առջեւ կեցած ու իր ձեռքերուն մէջ բռնած էր տախտակները: Ան էջերը մէկիկ մէկիկ դարձուց այնպէս մը որ մենք կրցանք զանոնք տեսնել ու յստակօրէն զանազանել անոնց վրայի փորագրութիւնները: Ան խօսքը ուղղեց Տէյվիտ Ուիթմըրին եւ ըսաւ. — «Տէյվիտ, օրհնեալ է Աստուած եւ ան որ կը պահէ իր պատուիրանները»: Ապա ձայն մը լսեցինք որ փայլուն լոյսին մէջէն կ'ըսէր. — «Այս թերթիկները Աստուծոյ զօրութեամբ յայտնուած են եւ Անոր զօրութեամբ թարգմանուած: Անոնց թարգմանութիւնը զորս դուք

կը տեսնէք, ճշմարիտ են եւ ես կը պատուիրեմ ձեզի որ արձանագրէք ու վկայէք այն ինչ որ դուք հիմա կը տեսնէք ու կը լսէք»:

Ես ձգեցի Տէյվիտն ու Օլիվըրը եւ գացի Մարթին Հարիսը հետապնդելու: Զայն բաւական հեռու տեղ մը գտայ, ջերմեռանդօրէն աղօթելով զբաղած: Ան շուտով ըսաւ ինծի որ տակաւին Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ չէր մտած եւ ինձմէ խնդրեց որ իրեն միանամ աղօթելով որպէսզի ինք ալ կարողանայ իրականացնել այն օրհնութիւնները որ մենք ստացանք: Ես իրեն միացայ աղօթելով ու վերջապէս ստացանք մեր բաղձացածը, որովհետեւ նախքան մեր աւարտելը, նոյն տեսիլքը մեր առջեւ բացուեցաւ եւ ես նորէն տեսայ եւ լսեցի նոյն բաները: Մինչ նոյն վայրկեանին Մարթին Հարիս իր ուրախութեան զմայլանքին մէջ պոռաց. — «Բաւական է՛, բաւական է, իմ աչքերս ալ տեսած են, իմ աչքերս ալ տեսած են...»: Ապա վեր ցատկելով ու չափազանց ուրախանալով պոռաց. — «Ո՛վսաննա»:

Այսպէսով Աստուծոյ գթութեան շնորհիւ այս փառահեղ յայտնութիւնները ստանալէ ետք վերոյիշեալ երեք անհատներուն կը մնար կատարել այն պատուէրը զորս ստացած էին — այսինքն՝ արձանագրել եւ վկայել իրենց տեսածը — այս ընելու համար անոնք հետեւեալ փաստաթուղթը պատրաստեցին:

Երեք Վկաներուն

Վկայութիւնը

«Թող բոլոր ազգերու, ազգակիցներու, լեզուներու եւ ժողովուրդներու որոնց համար այս գիրքը պիտի գայ, գիտնան, որ մենք Աստուծոյ եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհիւ, տեսանք այն ոսկեայ տախտակները որոնք կը պարունակեն այս արձանագրութիւնները: Ասոնք արձանագրութիւններ են՝ Նեփիի ժողովուրդին, նաեւ իրենց եղբայրներուն՝ Լամանացիներուն, ինչ-



«Մենք տեսանք թերթիկները ու կը
վկայենք թէ այս բաները ճշմարիտ
են»

պէս նաեւ Յարէղի ժողովուրդին, որոնք եկան
այն աշտարակէն որոնց մասին արդէն նախապէս
խօսուած է: Նոյնպէս, մենք՝ գիտենք որ անոնք
թարգմանուած են Աստուծոյ զօրութեամբն ու
չնորհներովը. որովհետեւ Անոր Զայնը մեզի
այսպէս յայտարարած էր — ուրեմն մենք վստահ
գիտենք թէ այս գործը ճշմարիտ է: Նոյնպէս՝ կը
վկայենք թէ մենք տեսանք թերթիկներուն վրայի
փորագրութիւնները, եւ թէ անոնք մեզ ցոյց
տրուեցան Աստուծոյ զօրութեամբ եւ ոչ թէ ոեւէ
մարդու զօրութեամբ: Եւ ահա մենք զգաստ
բառերով կը յայտարարենք թէ Աստուծոյ
հրեշտակ մը երկինքէն վար եկաւ եւ մեր
աչքերուն առջեւ բերաւ, թէ մենք տեսանք
թերթիկները եւ անոնց վրայի
փորագրութիւնները. եւ մենք կը գիտակցինք թէ
չնորհիւ Հայր Աստուծոյ եւ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի է որ մենք տեսանք ու կը վկայենք թէ
այս բաները ճշմարիտ են: Հրաշալի է այս մեր
աչքերուն առջեւ: Սակայն եւ այնպէս, Աստուծոյ
Զայնը մեզի հրամայեց որ անոնց մասին
արձանագրութիւն պահենք: Ուրեմն,
հնազանդող ըլլալով Աստուծոյ հրահանգներուն,
մենք կը վկայենք այս բոլորը եւ մենք գիտենք
որ եթէ հաւատարիմ ըլլանք Յիսուսի, մենք
պիտի կարենանք ձերբազատուիլ մեր մարդկային
արեամբ սնած հագուստներէն եւ առանց մեղքի
Քրիստոսի դատաստանական աթոռին առջեւ
պիտի գտնուինք ու իր հետ յաւիտենապէս պիտի
ապրինք երկինքներու մէջ: Թող փառաւորուին
Հայր, Որդի եւ Ս. Հոգի, որ է մէկ Աստուած:
Ամէն»:

Օլիվըր Քաուտերիյ
Տէյվիտ Ուիթմըր
Մարթին Հարիս

Այս բաները յայտնուելէն քիչ ատեն ետք,
հետեւեալ յաւելուածական վկայութիւնը
ստացուեցաւ:

Ութերու Վկայութիւնը

«Թող բոլոր ազգերը, ազգակիցները, լե-
զուները եւ ժողովուրդները լսեն որոնց այս
գործը պիտի գայ. — Որ Կրտ. Ճօզէֆ Սմիթհ`
այս գործի թարգմանիչը, մեզի ցոյց տուած է
այն թերթիկները, որոնց մասին վերեւ խօսուած
է, որոնք ոսկիի երեւոյթը ունէին, ինչպէս
նաեւ՝ նոյն թիւը թերթիկներու — որ Ճօզէֆ
Սմիթհ համադրած է իր թարգմանած գիրքը:
Մենք մեր ձեռքերով շօշափեցինք ու նոյնպէս
տեսանք անոնց վրայի փորագրութիւնները:
Բոլորն ալ հին գործի մը երեւոյթը ունէին ու
չատ հետաքրքրական էր անոնց
փորագրութիւնները: Այս բոլոր բաներուն
մասին զգաստութեամբ մենք վկայութիւն
կուտանք, թէ վերոյիշեալ Սմիթհը մեզ ցոյց
տուած է ու մենք տեսած ու շօշափած ենք՝ եւ
վստահօրէն գիտենք թէ այդ Սմիթհը ունէր
տախտակները որոնց մասին խօսեցանք: Եւ
այսպէս մենք մեր անունները վկայութեան
կուտանք համայն աշխարհին: Մենք բնաւ չենք
ստեր Աստուածային վկայութեան շուրջ»:

Քրիսթիան Ուիթմըր

Ճէյքըր Ուիթմըր

Կրտ. Փիլթըր Ուիթմըր

Ճան Ուիթմըր

Հայրամ Փէյն

Երէց Ճօզէֆ Սմիթհ

Հայրըմ Սմիթհ

Սէմուէլ Հ. Սմիթհ

Այժմ մենք անձկութեամբ կը սպասէինք որ
մեզի տրուած խոստումը իրականացուի: Մեզի
խոստացուած էր, Ահարոնի Քահանայութիւնը
չնորհող, երկնային պատգամաւորին կողմէ,
Մելքիսեղեկական Քահանայութիւնը —
պայմանաւ որ մենք հաւատարմօրէն
չարունակէինք մեր պարտականութիւնները:
Մելքիսեղեկական Քահանայութիւնը
իշխանութիւնը ունի՝ ձեռք դնելով շնորհելու
Սուրբ Հոգիին պարգեւը:

(Ապա Մարգարէն յայտարարեց թէ՛
Մելքիսեդեկական Քահանայութիւնը ստացան
Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննու ձեռամբ,
Սուսգահանա գետի եզրին, Բէնսիլվանիայի,
Սուսգահանա կուսակալութեան մէջ Հարմոնիի
եւ Նիւ Եօրքի, Պրում կուսակալութեան մէջ
Քուլզիլի միջեւ):

Եկեղեցի

Վերահաստատում

Երբ Մօրմոնի Գիրքը կը գտնուէր տպագրիչներուն ձեռքին մէջ, մենք շարունակեցինք վկայութիւն ու տեղեկութիւն տալ — մեր կարելիութեան սահմաններուն մէջ: Նոյնպէս՝ մեր եղբայրներուն յայտնեցինք թէ մենք պատուիրան ստացած էինք եկեղեցին կազմելու: Այդ պատճառաւ երէց Փիլթըր Ուիթմըրի տանը մէջ հանդիպեցանք (վեց հոգիներով), Երեքշաբթի օր, Ապրիլի վեցերորդ օրը, 1830-ին: Ժողովը մեր Երկնային Հօր ուղղուած աղօթքով մը բանալէ ետք, անցանք քննելու նախապէս մեր ստացած պատուիրանները: Մենք առաջարկեցինք մեր եղբայրներուն հաստատելու թէ մեզ որպէս ուսուցիչ կ'ընդունէի՞ն Աստուծոյ թագաւորութեան վերաբերող հարցերուն մէջ: Ինչպէս նաեւ խնդրեցինք որ յայտնեն իրենց կարծիքները, թէ կը գոհանայի՞ն եթէ եկեղեցի մը կազմաւորէինք մեր ստացած պատուիրաններուն վրայ հիմնուելով: Այս առաջարկներուն վրայ բոլորն ալ միաբերան հաւանութիւն տուին: Ապա ես իմ ձեռքերս Օլիվըր Քաուտերիյին վրայ գետեղելով զինք ձեռնադրեցի որպէս Երէց «Յիսուս Քրիստոսի Վերթին Օրերու Սրբոց Եկեղեցւոյ», ապա ինքն ալ իր կարգին զիս նոյն պաշտօնին ձեռնադրեց: Յետոյ նկանակ մը հաց առինք, օրհնելէ ետք հացը պատառներու բաժնեցինք, ապա զինի առինք ու նոյնպէս օրհնելէ ետք զանոնք ցրուեցինք մեր միջեւ: Յետոյ մենք մեր ձեռքերը գետեղեցինք իւրաքանչիւր անհատին

գլխուն որ ներկայ էր այդ ժողովին, որպէսզի անոնք Ս. Հոգիին պարգեւը ստանային ու հետեւաբար Յիսուս Քրիստոսի Եկեղեցւոյ անդամները դառնային: Սուրբ Հոգին մեծ աստիճանով մեր վրայ իջաւ. ոմանք մարգարէացան, մինչ մենք բոլորս ալ Տէրը գովաբանեցինք ու չափազանց երջանկացանք:

Ապա մենք յառաջացանք եղբայրներէն ոմանք քահանայութեան մէջ զանազան պաշտօններու կանչելով ու ձեռնադրելով, համեմատ Հոգիին ուղղութեան: Ուրախ ժամանակ անցնելէ ետք՝ ականատես ըլլալով ու զգալով Աստուծոյ շնորհիւ մեզ ընծայուած Սուրբ Հոգիին զօրութիւնը եւ օրհնութիւնները, մենք ցրուեցանք հաճոյ գիտակցութեամբ թէ արդ մենք անդամ եղած էինք «Յիսուս Քրիստոսի Եկեղեցւոյն» ճանչցուած Աստուծոյ կողմէ եւ հաստատուած ըստ իր պատուիրաններուն եւ յայտնութիւններուն, այս վերջին օրերուն, ինչպէս նաեւ ըստ կանոնին՝ արձանագրուած Նոր Կտակարանին մէջ:

Այս ուղիղ ու պարզ վկայութիւնն է ձօգէֆ Սմիթհի: Ան կը նկարագրէ որոշ դէպքերը որոնք առաջնորդեցին հիմնելու «Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցին»:

Եկեղեցւոյ հիմնումէն անմիջապէս ետք, ան իր հետեւորդներուն հետ փոխադրուեցաւ Նիւ Եօրքէն դէպի Քրոթլանտ, Օհայօ, Քլիվլանտի մօտ: Այդտեղ գեղեցիկ տաճար մը կառուցանեցին եւ ծաւալուն միսիոնարական աշխատանք տեղի ունեցաւ: Հետզհետէ եկեղեցւոյ միացան բազմաթիւ անդամներ: Ուրիշ միսիոնարական ճիւղ մը բացուեցաւ Միսուրիի մէջ ուր յետագային Եկեղեցւոյ անձնակազմը հոն փոխադրուեցաւ:

Այս, կրօնական անհանդուրժողութեան ժամանակ մըն էր. շուտով Վերջին Օրերու Սրբոց դէմ հակառակութիւն գրգռուեցաւ: Անոնք խստօրէն հալածուեցան մոլեռանդներու կողմէ: Խուժանները ստիպեցին անոնց որպէսզի տեղափոխուին, ձգելով իրենց տուները, յաւ

մշակուած դաշտերը, ինչպէս նաեւ իրենց պաշտամունքի տուները:

Ապա անոնք իլինոյզ գացին ուր գուր-գուրանքով ընդունուեցան: Ամայի վայր մը գտնելով անոնք գնեցին Միսիսիբիի եզրին հսկայ տարածութեամբ ճահճային դաշտ մը: Անոնք այս հսկայ ճահճային դաշտը չորցուցին ու հիմնեցին մեծագոյն քաղաքը իլինոյզի մէջ — «Գեղատեսիլ Նովու» անունով: Միսիսիբիական գործունէութիւնը ծաւալեցաւ Ամերիկայի եւ Անգլիոյ մէջ: Անդամներուն թիւը ստուարացաւ եւ ժամանակի մը համար անոնք հոն բարգաւաճեցան:

Սակայն «Նովու»-ի մէջ խաղաղութիւնը կարճ տեւեց: Կրկին անգամ մոլեռանդ եկեղեցականները սաստիկ հալածանք կատարեցին: Ճօզէֆ Սմիթհը եւ իր եղբայրը, Հայրըմը, կեղծ ամբաստանութիւններու տակ բանտարկուեցան իլինոյզի Քարթէյճ քաղաքին մէջ: Երբ անոնք վերոյիշեալ նահանգին պաշտպանութեան տակ կը գտնուէին ու դատուելու օրուան կը սպասէին — անոնք սպաննուեցան 27 Յունիս 1844-ին, խուժանի մը կողմէ որոնք իրենց երեսները ներկած էին ծպտուած ըլլալու նպատակով:

Պրիկամ Եանկը յաջորդեց որպէս եկեղեցւոյ գերագոյն առաջնորդը: Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցւոյ անդամները անոր առաջնորդութեամբ ձգեցին իլինոյզը եւ պատմական գաղթը կատարեցին դէպի «Րաքի Մաունթընզ» լեռները, ուր պայքարելով ու հաւատք տածելով, անոնք զօրաւոր ժողովուրդ մը դարձան:

Բազմաթիւ երկիրներու մէջ, հարիւր հազարաւորներու կողմէ Ճօզէֆ Սմիթհը այսօր կը ճանչցուի որպէս Աստուծոյ Մարգարէն: Անոնք որոնք ընդունած են իր վկայութիւնն ու առաքելութիւնը, կը կանգնին որպէս յուշարձանները Աստուածային կանչին: Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցին իր հիմնումը կը պարտի անոր ըրած յայտնութիւններուն եւ սորվեցուցած սուրբ իրականութիւններուն: Նաեւ պէտք է գիտնալ որ

**Քահանայութեան իշխանութիւնը իր միջոցաւ
վերահաստատուեցաւ այս աշխարհին վրայ:**

(Արտափաղուած «Ճօզէֆ Սմիթի», 2:3-75էն եւ
«Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց
Եկեղեցւոյ Պատմութենէն», [Սուրբ Լէյֆ Սիթի,
Տեղերեք Պուլ Գոմբանի, 1967], 1:2-79):

ՄԻՍԻՈՆԻ ՀԱՍՑԷՆԵՐ

Յիսուս Քրիստոսի Վերջին Օրերու Սրբոց Եկեղեցոյ միսիոնարական գրասենեակները աշխարհատարած են: Դուք կրնաք Եկեղեցոյ եւ Աւետարանին մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալ՝ դիմելով ներքեւի հասցեներէն ձեզի ամենէն մօտ եղողին:

Australia Sydney Mission
5 Russell Street, Wollstonecraft
Sydney, N.S.W., 2065, Australia

Brazil Sao Paulo North Mission
Caixa Postal 20809
Sao Paulo, SP, Brazil

California Los Angeles Mission
P.O. Box 24889
Los Angeles, California 90024

Canada Toronto Mission
338 Queen Street East, Suite
205
Brampton, Ontario, Canada L6V
1C4

England London Mission
64/68 Exhibition Road
London SW7 2PA, England

Germany Frankfurt Mission
6 Frankfurt/Main 90
Ditmarstrasse 9, Germany

Hong Kong Mission
No. 2 Cornwall Street, Kowloon
Tong
Kowloon, Hong Kong

Italy Rome Mission
Via Cimone 95
00141 Rome, Italy

Louisiana Shreveport Mission
P.O. Box 3946 (2610 Fairfield
Avenue)
Shreveport, Louisiana 71103

Mexico Mexico City Mission
Monte Caucaso 1110
Lomas de Chapultepec
Mexico 10, D.F.

Netherlands Amsterdam Mission
Amersfoortsestraatşeg 214
Huizen N.H., Post Busson
Netherlands

New York New York City
Mission
973 Fifth Avenue
New York, New York 10021

South Africa Johannesburg
Mission
"Cumorah," No. 4 Fifth Avenue
Lower Houghton, Johannesburg
Transvaal, South Africa

Spain Madrid Mission
Calle San Telmo 26
Madrid 16, Spain

Utah Salt Lake City North
57 West South Temple, No. 252
Salt Lake City, Utah 84101

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՑ ԾՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՅԻ

ARMENIAN, WEST



4 02326 67104 7

32667 104